

Шенгаль оштагынан

Лонгина

(Енгизин)

Лонгина
Енгизин
А. А. Симеон
от фабрики

СУЗНЕСКИЙ

78(47-925) (Կոմիտաս) 9697

5-64 Մէտաղադիմ, Ա.

3m. յ.

4n.

78(47-925)(ՕՀՀԿողման)

Մ-64

ԱՐԱՎԻՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՏԱՐԴԻԳՈՒՅՑ 1961 թ.

Հ Ա Խ Ծ Ե Բ

ԿՈՄԻՏԱՍ

(Հեղինակի նկարներով)

A 2979 9697



Հայպետհրամ
Երևան
1947

А. МЕСРОПЯН
ВОСПОМИНАНИЯ
КОМИТАС
(На арм. языке)
Армгиз, Ереван, 1947

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Թաշնակահաբուճի Աղամիլի Մեսրոպյանի հուշերը
մեծատաղանդ Կոմիտասի մասին, կարելի է ասել
միակ քիչ թե շատ ընդարձակն է մինչև հիմա եղած-
ների մեջ: Հուշագրության մեջ կարեռագույնը
փաստական տվյալներն են առհասարտկ: Փաստերի
գնահատումներն ու լիմաստավորումները հետո են
գալիս, երբեմն շատ անակնկալ կապակցությամբ
Այս պատճառով հուշագրի տվյած փաստերի կարեռն
ու անկարեռը հաճախ դժվար է կանխատեսել և գը-
նահատել: Նախ պետք է զրի առնել այդ փաստերը:

Ներկա հուշերը կենդանի պատկերացնում են Կո-
միտասին Պոլսաւմ և Փարիզում: Մի քանի փաստեր
մեծանշանակ են Այսպիս՝ Կոմիտասի ներկայությու-
նը Պոլսում, ըստ երեսութին, մեծ շարժում է տոաչ
ընթել այնտեղի հասարակության մեջ՝ գաղթավայր
տանելով ժողովրդական երաժշտության թարմ հո-
սանքը: Ծնորհիվ Կոմիտասի հայությունը և ժողովրդա-
կան արվեստի հասկացողությունը տարածվում է
պոլսահայության մեջ: Պակաս ուշագրավ չէ նաև
այն հանգամանքը, որ թուրք հասարակությունը և
մեծ հետաքրքրություն է ցույց տալիս գեղի համ
ժողովրդական երաժշտությունը: Այդ հետաքրքրու-
թյունը տարածվում է նաև պոլսաբնակ այլ օտար-
ազգիների մեջ: Խանդավառ Կոմիտասը հմայում է
բոլորին և բարձրացնում հայ ժողովրդական երգի
նշանակությունը նույնը և Փարիզում, ուր Կոմի-

տասը մեծ վարպետությամբ ցուցադրում է հայ
կրդը:

Հեղինակը կարողացել է տալ Կոմիտասի հմայքը,
նրա բնավորության գծերը, հետաքրքիր էպիդրամեր
սրտառուչ դեպքեր և այլն: Միաժամ այս գըր-
վածքում տեսնում ենք Կոմիտասի պրատումները
հայ երաժշտության նյութերի հետքերով: Շեյխի
հետ հանդիպման տեսարանը այդ տեսակետից շատ
ուշագրավ է: Հուշերը գրված են ջերմ, սիրով և խը-
նամքով: Մեծն Կոմիտասի կհնագրության մեջ սա
կըսնի իր արժանի տեղը:

Դ. ԴեՄիրճյան

ԱՐՁՈՒՆ ՀԱՆԴԻՌՈՒՄ

Ժան Գուժոն վողոցին վրա կզտնվի Փարիզի հայոց եկեղեցին: Պատահականությունը երջանկաբեր է. ժամանակավոր մեր ապրելիք հյուրանոցը՝ «Հոթել Ռիվոլի» եկեղեցին դիմացն է: 1907-ի ապրիլ ամսին, մորս առաջնորդությամբ Փարիզի հայոց եկեղեցին հյուրասրահն ենք. մենք երկու քույր և փոքր եղբայրս, արդեն երաժշտություն սորվողներ, առանձին հետաքըրքությամբ. և սրտատրոփ կսպասենք անկյունը տեղավորված գաշնամուրին տիրոջը, որուն բացարիկ երաժշտական շնորհք ունենալը կվկայի երիտասարդ ուսանող Հայկ-Արամը:

—Ահա, Կոմիտաս վարդապետը, —յույց կուտա Հայկ-Արամը Հանկարծակի կտեսնեմ սև հագուստներով, կարմրաթուխ մորթով, ցանցառ փոքրիկ մորուսով, համակրելի սև աչքերով երաժիշտակությամբ կոմիտասը, որ փութկորա քայլերով թեին տակի կլոր թղթի ծրաբները դաշնամուրին վրա գետեղիկ վերջ, բարի ժպիտով բոլորի կծանոթանա և կսկսի հետաքըրքովի առանձնապես մեր երաժշտական ուսանողությամբ:

Առաջնորդարանին մեջ մեզ և ուրիշ հյուրերու հետ ընթրելե վերջ, առաջնորդ հոր՝ Վուամշալուհ Քիալարյանի հրավերով Կոմիտասը դաշնամուրին դիմացը անցնելով, հազիվ մատները ստեղնաշարին վրա, անա կսկսի հիանալիորեն երգել. «Կանչե՛, կռնչնկ, կանչե՛, քանի գարուն է, զարիբներուն սիրտը գունտ-գունտ արուն է»... Կոմիտասյան բացարիկ, հարազատ կատարումով այդ երգը՝ առաջին օրվենք դրոշմվեցավ մտքիս և հոգույս մեջ...

Վեց երկար օրեր, մինչև Կոմիտասին Զվիցերիա մեկնիլ առաջնորդարանի նույն դահլիճին մեջ, վայելեցինք իր երգերուն թանկագին շաբանները:

Երգիչ—երաժիշտ Կոմիտասը այդ օրերեն գրավեց մեր պա-

տանի սերն ու ուշագրությունը, և այդ ժամանակեն, հեռվեն կամ մոռեն, զարձավ մեր ընտանիքին անզուգական սիրելին:

1907 թվականեն Կոմիտասը արդեն Եվրոպայի կենտրոնական քաղաքներուն մեջ (Փարիզ, Պերլին, Լայփցիկ, Ժընե, Պրյուքսել) հանրածանօթ երաժշտագիտ էր դարձել շնորհիվ հայ ժողովրդական երգերուն նվիրված իր բազմաթիվ համերգներուն և զասախոսություններուն, որոնց բացառիկ երաժշտական արժեքը օտար մամուլի էջերով կհասնելին մեզ մինչև Լոնտոն...»

1911-ի հունվարի 11-ին, Լոնտոնի Գուինս Հոլ-ի համերգային դահլիճին մեջ, Արամ Ռաֆֆիի և օր. Զապել Պոյաճյանի կազմակերպած տարեկան մեծ նվազահանդեսը (ի նպաստ Հայաստանի կարուելոց) նյութական բացառիկ հաջողություններու հասավ՝ շնորհիվ Կոմիտասի հայ ժողովրդական երգերուն, որը առաջին անգամ կատարեց հեղինակին մերձավոր աշակերտուհին՝ Փարիզին հրավիրված հայտնի երգչուհի օր. Մարգարիտ Պապյանը...»

1912-ին, Լոնտոննեն մեր վերապարձին, քանի մը օր վերջ բաղդ ունեցա իրեւ զաշնակահար—ուսուցչուհի զասավանդելու Բերա-Սաք-Աղաճ, Լալե փողոց Համազգյաց Օրիորդաց Վարժաւանը: Ըստ հորս տեղեկությունց, Փարիզի առաջնորդարանին մեզ ծանոթ երաժիշտ-երգիչ Կոմիտասը ժամանակավորապես հաստատվեր էր Լալե փողոց, Համազգյաց Օրիորդաց Վարժարանին դեմ-հանդիման փանսիոնին մեջ:

Որքան բարեպատեհ էր առիթը, երբ առաջին անգամ հորս հետ այցելեցինք մեր սիրելի Կոմիտասին, որ մեղ հայտնեց Պոլումեջ երգչախումբ մը և երաժշտանոց մը կազմակերպելու իր նպատակը: Նա ինձ առաջարկեց մեր զարոցի աշակերտուներն ձայնական տվյալներով օժտվածները իրեն ծանոթացնել:

Ահա այդ առթիվ կոկսի իմ և խոռմը մը չափահաս աշակերտուներու և ծանոթներու մոտիկ հարաբերությունը Կոմիտասին հետ:

Համազգյաց Օրիորդաց Վարժարանի դիմացը զանկող այդ հյուրանոցը իրեն կապեց մեր սրտերը: Մեր սիրելի Կոմիտասի միջոցավ մենք այդ տան մեջ ծանոթացանք Ռուսաստանեն, Եվրոպային Պոլիս այցելող հայ արքեստագետներու և մտավորական-ներու, որոնց մեջ էին Ավետիք Խսահակյան, Սիամանթո, Դ. Վարուժան, Փանոս Թերլեմեղյան, Տիրայր վարդապետ, Պարեգին-

վարդապետ Հովսեփյան, նկարիչ Եղիշե Թաղեռոսյան, Սևումյան ամուսիններ... Ասոնց մեջ շատերը կապրեին այդ պատմական շենքին մեջ, խիստ սիրալիք, ջերմ մթնոլորտի մեջ, որուն առանցքը կը կազմեր շեն ու շենշող մեր սիրելի Կոմիտասը:

Կարճ ժամանակվան մեջ, Կոմիտաս վարդապետը՝ սիրելի երգիչ արվեստագետը դարձավ Համազգյաց Օրիորդաց Վարժարանի բարձրագույն դասարանի աշակերտուհիներուն, որոնք ի նշան իրենց խոր հարգանքին, թարմ ծաղիկներով սկսան զարդարել անոր սենյակը:

Հիշատակելի է հետևյալ դեպքը: Դեկտեմբերի խստաշունչ օր մը Կոմիտասին հյուր եկած էին իր եջմիածնա ընկերներն մանրանկարիչ վարդապետ դասախոս Դարեգին Հովսեփյանը և նկարիչ Եղիշե Թաղեռոսյանը, որոնք Պոլս մեջ ելույթներ ունեցան, խանդավառելով երիտասարդությունը: Համազգյաց վարժարանի տնօրին Աղավնի Զադրյան, ուսուցչուհի Արշակուհի Թիոդիկ և բարձրագույն կարգի աշակերտությունը վաղօրեն պատրաստած էին շքեղ ծաղկելիուններ՝ ի պատճիվ վերոհիշյալ երկու հյուրերուն:

Կոմիտասը Համազգյացի աշակերտության նվիրած ծաղկելիունները կառքերուն մեջ տեղավորելե վերջ, ժամկետը երեսին, նոտելով իր սիրելի Գարեգինի¹⁾ և Եղիշի մոտ, սկսավ սրախոսել. «Առ քեզ հարսանեկան կառք մը, սակայն առանց հարսիւմ...»

Պոլսո Ղալաթիո Լուսավորիչ եկեղեցին հոչակավոր է իր լայնանիստ, և կողք կողքի կառուցված երեք փառակոր եկեղեցիներով: Բացի դարավոր պատմական արժեքին, հիշյալ եկեղեցին պոլսահայության ամենամեծ ուստատեղին է:

Ամեն հինգշաբթի, գեր վաղ առավոտյան, Պոլսո հեռավոր արվարձաններն հոծ բազմություն մը եկեղեցի կուզաւ ես, իբրև Ղալաթիո Լուսավորիչ եկեղեցո ավագ քահանային աղջեկը, մանկական օրերես մտքս և հոգվույս մեջ ունիմ անկե կուտակված հիշողություններ, որոնցմե ամենաթանկագինը պիտի հիշեմ այստեղ:

Ներսես Պատրիարքի կառուցած Պոլսո Ղալաթիո անվանի կեղոնական բարձրագույն վարժարանը կգտնվի Լուսավորիչ եկեղեցո շրջաբակին մեջ:

1) Ներկայիս Կիլիկիո Տան Պարեգին Ա. Կաթողիկոս: Ծ. Հ.

1911-ին, Կոմիտասը իր Պոլիս հասած օրերեն սկսելով կեղրոնա-
ան Վարժարանին հայկական երաժշտության դասախոսը դարձավ:

Այդ վարժարանին մեջ Կոմիտասի հայ երաժշտության գո-
տախոսությունները աշակերտության բացառիկ ոգևորության
աղբյուրը հանդիսացան: Կարճ ժամանակվան մեջ կազմեց 300 հո-
գինոց երգչախումբ մը, որուն մեջ մտան կեղրոնականի բաղ-
մաթիվ աշակերտներ:

Անմոռանալի են այն հինգշաբթիները, երբ Կոմիտասը իր
երգչախումբով Դալաթիո Լուսավորիչ եկեղեցին արարությանը
կմասնակցեր:

Երգչախումբին փորձերուն հաճախ ներկա և մեջերու կո-
միտասը բացի իր աշակերտներեն, մեծ քծախնդրությամբ կը
պատրաստեր նաև քահանայից և զպրաց դասու բաժինները: Որ-
քան անմոռանալի պիտի մնա Դալաթիո դարավոր եկեղեցվու
1914-ի ավագ հինգշաբթիի քառաձայն պատարագը, որուն թե հե-
ղինակը, թե օրվան պատարագիչն էր Կոմիտասը: Այդ պատմական
օրվան Կոմիտասյան քառաձայն պատարագին համար՝ ամբողջ
մեծ պահքի յոթ երկար շաբաթները, թե իր երգչախումբին մնա-
յուն տեղը, (Բերայի Եսայան Վարժարանի սրահը), թե Կեղրո-
նական վարժարանին մեջ, հեղինակը հրավիրեց Պոլտ զանազան
արվարձաններեն գլուխեաներ, զանոնք մարզելու համար քառա-
ձայն երգեցողության մեջ: Անոնց միաձույլ և վարպետ կատա-
րումը հեկավ ապացուցելու, որ Կոմիտասը մեծատաղանդ դեկտ-
վար մըն էր միենաւյն ատեն:

1912 թվականնեն սկսյալ՝ Կոմիտասի «Գոււսան» երգչախումբը
իր հաճախակի համերգներով հայտնի դարձավ համայն պոլսահա-
յության, որ նույնիսկ հնուավոր արվարձաններեն՝ կիութար վա-
յելնելու հայ ժողովրդական երգերու համեն ու հոտը:

Կոմիտասի բացառիկ աշխատասիրությունը, միացած երաժշտ-
տական խոր գիտության և ձեռներեցության, ինչպես նաև ար-
վելստի մեծ քծախնդրությունը, «Գոււսան» երգչախումբին տվին
հոչակավոր գարելլայի մը կատարելությունը:

Կոմիտասի երգչախումբին փորձերուն զլխավոր և մնայուն
վայրը կհամարվեր Բերայի Եսայան Վարժարանին սրահը: Նշա-
նակյալ ժամեն 10—15 րոպե առաջ եկած էր արգեն Գոււսանա-
պեաը: Կոմիտասը, որ սրահին անկյունը զաշնամուրին առջև նըս-

տած, իր շուրջը հավաքված երգչախումբին երկսեռ անդամներուն հետ մտերմորեն կիսոսեր, մերթ ընդ մերթ կատակելով...

Դեկավար Կոմիտասը, ուղիղ և ձիգ կանգնած, ձեռքի սպիտակ քամհոթոնը բարձրացնելով արագորեն կրամներ ձայները և իր «մոգական գավագանով» իրեն կհպատակեցներ երեք հարյուր հոդինոց երգչախումբը: Վայ այն աշակերտներուն, որոնք հեռավոր արգարձաններե հետ հետաքանի մտնելով գաղտագողի կզրավեհին իրենց տեղերը: Նման գեղեցր չէին վրխուր Կոմիտասի աչքերեն: Դադարի ատեն ծիծաղով մը զանոնք կանվաներ «Քեռթենքելիներ և Սեղոս—Թորոսներ»¹⁾:

«Գուսան երգչախումբին վեցամսյա համերգներուն շարանները ընդհանուր պոլսահայության ծանոթացուցին հայ ժողովրդական և գեղջուկ երգերուն ճշմարիտ հմայքը:

Որքան խոր և վեհ տպակորություն կը գործեր լսողին և դետողին վրա, երբ «Գուսան» երգչախումբը Կոմիտաս վարդապետի ճարտար զեկավարությամբ կմկներ ութ ձայնով երգել հայ ժողովրդական երգի դիմարները:

Կոմիտասի ջանքերը ի դերե չելան. մեկ քանի տարիներու ընթացքին, անոր ութ երիտասարդ աշակերտները խմբավայրներ դարձան, որոնք մինչև օրս ալ շարունակելով իրենց վարպետին մեծ զործը աշխարհիս զանազան կեղուններուն մեջ, հայտնի դեմքեր դարձան, հայ և օտար զղղերուն ծանոթացնելով հայ ժողովրդական երգը:

Կոմիտաս վարդապետը իր կրթիչ և դաստիարակիչ ազգեցությունը սիոնց «Գուսան» երգչախումբին վրա, և հակառակ իր զվարքի ընավորության, ոքքան բուռն էր զայրությը, երբ իր աշակերտները անշատապահ էին, կամ իր ներկայության անտեղիուրեն իրարու հետ օտար լուղով կիսունեն: Նույնպես երբեք չէր հանդուրժեր, որ իր աշակերտները եվրոպական անուններ կրեին: Նման առիթներուն ան վշտացյալ շեշտով մը կըսեր. «Հայ ժողովրդը զավակներ, զուք կարգացեր Մորինացի, Եղիշե, Նարեկացի, Խաչատուր Արովյան, Ռաֆֆի, Ալիշան, Պեշիկթաշյան և անսեք թե ով ենք մենք»:

Ամեն օր նույն ժամերուն Կոմիտասին կողատահենք Կալաթայի

¹⁾ Քեռթենքելիներ՝ մողես. Սեղոս—Թորոս—Կոմիտասի սիրած մակղիրը՝ ուշացողներուն ուղղված: Ծ. Հ.:

թյունելեն մինչև Բանկալթիի իր բնակարանը տանող պողոտային վրա, երբեմն առանձին, հաճախ՝ իր գրականազետ մտերիմներուն—Սիամանթոյի, Ռուբեն Զարդարյանի, Ռուբեն Սկակի, Հրանդ Ասատուրի, երբեմն ալ իրեն ուղեկցող խումբ-խումբ ուսանողության հետ:

Կոմիտասը իր մեծ արվեստով նույնիսկ օտար աշակերտության հարգանքին արժանացած էր:

1913-ի սեպտեմբերին, Կոմիտասը զիս շտամ կանչելով իր տունը, հայտնեց հայ տառերու գյուտին 1500 և տպագրության 400-ամյակին առթիվ իր կազմակերպելիք նվազահանդեսի մասին հվ հայտնեց այդ օրվան համար իր սրտին միակ փափաքը, թե համերգին մասնակցողները միայն հայ արվեստագետներ պետք է ըլլան: Նա ինձ առաջարկեց, իբրև նորավարտ դաշնակահարուհի, որ ես ալ ունենամ իմ բաժինը...

Այդ օրը Կոմիտասը երկար ժամեր իր դաշնամուրին նվագով ջանաց զիս ընտելացնել հայկական երաժշտության ոճին կրկնել տալով, թե իր ձեռագիր երկու պտրերեն «Ունարին» ու «Մարալին» և թե նիկողայոս Տիգրանյանի Ա—տետրի հայկական ժողովրդական կլոր պարերը:

Բայց գժբախառաբար անոնք ունենալով դժվարին ոիթմ, անհասկնալի մասցին ինձի համար: Մեծ երաժշտագետը նկատելով հայ երաժշտական ոճին տիրանալու գժվարություններս, թույլատրեց, որ ես գիտցած դասականներես նվազեմ: Այդ առթիվ լսելով Պեթհովենի ութերորդ սոնատի կատարումս, անունս դրեց իր ծոցատերին մեջ:

ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈԼՍՈ ԲԱՆԿԱԼԹԻԻ ՏՈՒՆԸ

Բերայի Բանկալթի թաղամասին մեջ, գլխավոր պողոտային վրա, Ս. Հակոբի ախարեթներ կոչված տուներեն վերջնոյն մեջ կապրեր Կոմիտասը, իրեն ընկեր ունենալով հայտնի նկարիչ Փանոս Թերլեմեղյանը:

Կոմիտասի աջակցությամբ Փանոս Թերլեմեղյանը այդ բնակարանի երրորդ հարկին մեջ հիմնեց իր աշխատանոց—դասարանը՝ ամեն հարմարություններով, նույնպես երկըորդ հարկին վրա

վարձեց երկու այլ սենյակներ, որտեղ ցուցադրվեցան իր նկարները:

Բանկալթիաբնակ ուր հայը իր օրվան երթևեկին չհանդիպեցավ Կոմիտասի տունը մանող ելլող խումբ-խումբ օտար մարդկանց, կամ անոր դրան առաջ պաշտոնական կառքերով եկող դեսպանական այցելուներու:

Գալով մեղ, Բերայի խումբ մը երիտասարդ նորավարու արդեստագետունիներուս, թե երաժշտական և թե նկարչական գործերու պատրվակներով այդ արվեստի օջախը հաճախակի մտնելու առիթներ ստեղծեցինք: Մեր խումբի ընկերունիներեն չորսը Փանոս Թերլեմեզյանի նկարչական գասարանին լավագույն աշակերտունիներն էին,—օրիորդ Աստրինե Տոնելյան (դուստր բանաստեղծունի Սիսիլի), օրիորդներ Ելիդ Շենտերենյան, Շուշանիկ Պոշնակյան (ներկայիս նկարչունի ի Փարիզ) և պելճիքացի Ժան-Պետինիե:

Շաբաթ կամ հինգշաբթի կես օրերեն վերջ կը բարձրանաւինք իր տան երկրորդ հարկը, փողոցին վրա նայող լուսավետ մեծ սենյակը, որ Կոմիտասի ընդունարան—աշխատանոցն էր:

Կոտոնեինք զինքը սենյակին պատշպամին վրա, իր լայն բազկաթուին մեջ, ուր կկարդար, կամ դաշնամուրին և կամ Փիդհարմոնիային առջև նվազով զբաղած:

Որքան պաշտելի էր ան, երբ մեր խնդրանքին վրա, կերպեր երիտասարդական կյանքին խոսող մեր ամենասիրելի երգերեն Շիմ Հինարի յարլը, «Ես գիշեր լուսնյակ գիշեր»-ը, «Քելեր-ցուլեր-ը, որոնց երեքն ալ Կոմիտասյան ինքնուրուցն արվեստի նը-մուշներ, մեզ կտանեին դեպի մեր սիրելի հայրենիքը, դեպի Հայաստան, դեպի անոր հիասքանչ բնությունը, դեպի հայ շինականի չարքաշ աշխատանքն ու վաստակը»:

Մեծ երաժշտագետը մեր սրտին և հոգվույն մեջ բացի հայ տոհմային երաժշտության սերն ու ճաշակը ներարկելե, երբեք չեք մերժեր պելճիքացի օրիորդ Պետինիեի խնդրանքով երգելու Շուպերթի սերենատը գերմաներեն բառերով, Մասընիկ ոսմաննը Փանոներենով, Հենտլի «Ալելույան», Կունոյի և Տիգրան Զուխաճյանի «Ավե Մատիառ-ները իտալերենով»:

Կոմիտաս վարդապետի աշխատանոցին մեջ հաճախակի կը-հանդիպեինք պուսահայության քաջ ծանոթ եվրոպացի խոշոր

երաժիշտներեն Հեկեի, Ֆուռլանիի, Լանկիի, Սելվելի, Կուռըի
և Սինանյան եղբայրներուն, Էտիլառ Մանսանին և դեռ շատ
շատերուն:

1911-ի ամառեն սկսյալ մինչև հաջորդ տարվա վերջը, Կոմի-
տասի տանը մենք հաճախակի պատահեցանք համայն հայության
գույք մը սիրելազույն բանաստեղծներուն՝ Ավետիք Խաչակյանին և
անոր անընդամ մտերիմ ընկեր Սիամանթոյին (Ատոմ Եաբճանյան)։
որոնք նույնպէս կապրեին Բանկալթի, մեծ երաժշտագետի բնա-
կարանին խիստ մոտիկ։

Ահա տասնյակ տարիների վերջ ալ, կարելի՞ է նվիրականու-
թյամբ չվերհիշել այն հավետ անմոռանալի պատկերները, որոնց
տուանցը կկաղմեր հայ ժողովուրդի երդի կոթողը, անմահ Կոմի-
տասը։

ԿՈՄԻՏԱՍԻ ՓԱՌՔԻ ՕՐԵՐԵՆ

(1913, Հոկտեմբեր)

Հայ տառերու դյուտին 1500 և տպագրության 400-ամյակին
առթիվ Կոմիտասի նախաձեռնությամբ կաղմակերպվեցավ մեծ
նվազահանգես մը Բերա, Փըթի-Շանի ձմեռային թատրոնին մեջ։
Ներկա էին բազմահազար հայեր, որոնց մեծ մասը Պոլսո հեռա-
վոր արվարձաններեն։

Փըթի-Շանի մուտքի ընդարձակ պարաեզեն սկսյալ, այդ
ժարդկային զանգվածը իր խլացուցիչ ժխորով շշմեցուցիչ մթնո-
լութ մը ստեղծեց։ Աննկարազրելի էր դահլիճին թե ներքին, թե
արտաքին միջանցքներուն մեջ, մինչև երկաթապատ ձողերուն
կառչած հարյուրավոր մարդկանց ահեքը։ Շատեր հազիվ տեղա-
փորվեցան Փըթի-Շանի միջանցքներուն վրա, առանձնահատուկ
լոժերը զբաված էին ստքի վրա սեղմված մարդիկ։ Վերնատու-
նեն լսվող աղմուկը կզգացներ աղբային այդ մեծ տոնին ժողո-
վը բականությունը։

Մասնակցող արվեստագետները քուլիսի դոնեն ներս հազիվ
կմտնեին... Այսուեղ էր Կոմիտասը՝ ժիր ու կորովի, սիրալիր շըր-
ջապատված բարեկամներեն, — Ռուբեն Սևակ, Սիամանթո, Բյուզանդ
Քեչյան, Ռուբեն Զարդարյան, բժիշկներ Տաղավարյան, Գեննե և

զեն ինձի շատ անծանոթներ, որոնցմէ շատերը ելույթ ունեցան օրվան հանդեսին մեջ:

Կազմակերպիչ Կոմիտասը ժամացույցը ձեռքին բռնած կորու շեր յուրաքանչյուր ելույթին տեղությունը, Երեկոյան ժամը 8-ին Կոմիտասը որոտնդոստ ծափահարությանց մեջ առաջինը երեց բեմի վրա և իր հակիրճ ներածականով դրվատեց Սահակ-Մեսրոպյան հանճարեղ դյուար և հոբելյանական համազգային տոնը հայտարարեց բացված: Աննկարագրելի էր Կոմիտասի խանդակառությունը, որով սգեորվեցավ ժողովուրդը: Հոետոքները մեկը զմեկու ետեն իրենց պերճախոս ելույթներով արժանացան ջերմագին ծափահարությանց: Կոմիտասի ամենասիրելի ընկերներն հայտնի բանաստեղծ Սիամանթոյի օրվան տոնին նվիրած «Յուրը-Մեսրոպ» երկարաշունչ բանաստեղծությունը արժանացավ որոտընդոստ ծափահարությանց և Կոմիտասի ջերմ շնորհակալության:

Դադարի պահուն Կոմիտասի ոգեորությունը իր գագաթնակերին հասավ: Նա բեմին ետե, ճակտեն հոսող քրախնքին անդիտակը իր բազմաթիվ ընկերներուն շնորհավորությունը կընդուներ, որ, Պոլսո թյուրքական հայտայաց ոեժիմին տակ հերոսաբար մաքառելով կարողացավ կազմակերպել հայկական այսպիսի տոնահանդես մը...:

Սկսավ մեծ նվազահանդեսին առաջինը բաժինը: Իրարու ետեն հանդես եկան Սինանյան երեք եղբայրները, որոնց ավագ եղբոր՝ հայտնի դաշնակահար երգահան Հարություն Սինանյանի օրվան առնին նվիրված քայլերգը և երգերը արժանացան ջերմ ընդունելության: Հարություն Սինանյանի երգերով բեմ ելան առաջինը Փարիզի օֆինուայի հայտնի թենոր՝ Էջմիածնա նախակին սան Արմենակ Շահ-Մուրատյանը, իսկ երկրորդը՝ Փարիզի նորավարտ երիտասարդ երգիչ (պարիթոն) Թորգոմ Պեղապյանը, ապա տողերւս գրող նորավարտ դաշնակահարուհի Աղավելի Մեսրոպյանը...:

Հասավ համերգին դյութական բաժինը.. Բացառիկ մեծություններուն արված համեստությամբ մը, ինքը Կոմիտաս, հայտարարեց իր անունը և կատարելիք հայ ժողովրդական երգերուն անունները: Կոմիտասի անունը տեղի տվավ երկարատե ծափահարությանց, «Հորովհելի», «Անտունիի», «Մոկաց Միրզա»-ի անման երգերը դյութեցին բազմահազար ժողովուրդը: Կրկին որո-

տացող ծափահարություններով Կոմիտասը նստավ այս անդամ՝ գաշ-
նամուրին առջև։ Այդ խորափորհուրդ և սրբազն բոպերին մարդ-
կային վշտի, թախիծի պոռթիումներն էին, որ անմահ երաժշտին
կոկորդեն բղնելով հոսեցին բազմահազար լսողներուն սրամքուն
մեջ, կազմելով հայ ժողովրդի հոգեոր հարստության ծովը...»

Անչափ հուղական ու հետաքրքիր էր նույնակես նվազահան-
գեսին վերջավորությունը։ Պոլսո հայաշատ արվարձաններեն նվի-
րաբերված և դահլիճին չորս կողմերեն հանկարծակի արձակված
սպիտակ աղամբիններուն երամները խելաչեղ կերպով սկսան թըռչ-
կութիւ ամեն կողմ...»

Գույնզույն ծաղիկներ ծածկեցին բեմը, և ժողովրդի չգագ-
րող ուսաներու և և համարդ կեցցե Կոմիտաս վարդապետ բա-
ցականչություններուն մեջ, Փըթի՛-Շանի վարագույը վակվեցավ։

Կոմիտասի պոլսական կանքին մեջ հիշատակելի են իր մը-
տերիմ ընկերներուն հետ հաճախակի կազմակերպած ուսումնա-
սիրական պառուտները։

Արվեստի կոթողներ, պալատներ, մզկիթներ, զորանոցներ...
դարերե ի վեր կկըեն հայ անմահ արքեստագետ ճարտարապետ-
ներ՝ Պալյաններու, Տատյաններու և Սինաններու և անսոց հա-
ջորդներու անջնջելի կնիքը...»

Կոմիտասի ամենասիրած բնության վայրերը կհանդիսանային
Մարմարայի կապտագեղ ջուրերուն վրա նստած իշխանաց կղզի-
ները, որոնց արեալաւ ժայռերուն վրա կերգեր նա իր ընկեր-
ներուն հետ։

Հաճախ ալ, ամառային կիզիչ օրերուն, Կոմիտասի ամենամեծ
հաճույքը կլազմեր շոգենավային պառույտներ կատարել Վոսփորի
մեկ ծայրեն միւսը իր ընկերներուն հետ։ Ի հիշատակ այդ անմո-
ռանալի օրերուն, խումբին մնայուն նկարիչը Փանոս Թերլեմեկ-
յանը կտավին կհանձներ բնության տեսաբանները...»

Նման օրերեն մեկը, երբ ես երաժշտական դասավանդության
առիթով կամուրջեն դեպի Պեյոյուքտերե (Վասփորի երովական
ափին ծովափնյա գյուղ) կերթայի, նույն շոգենավին մեջ հանդի-
պեցա սիրելի ծանոթ գեմքերու՝ Կոմիտասին, Սիամանթոյին, Ման-
նիկ և Շահան Պերպերյաններուն և Փանոս Թերլեմեկյանին, որոնք
շոգենավին ցուռելին վրա տեղափորված, իրենց խնջույքի ծրար-
ները բացած էին։ Նկարիչ Փանոս Թերլեմեկյանը իրմե անրաժան-
նկարչական տուփը բանալով մինչև մեր Պեյուք Տերե հասնելը, այդ
խումբը նկարեց։

Երևանի մեջ, 1931 թվականին սկսյալ երկար տարիներ, ամեն անդամ հանդիպումներուս ատեն, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը խոստացավ իբր հիշատակ նկար մը նվիրել ինձ: Ես խնդրեցի իրմե միայն և միայն վոսփորի շոգենավին մեջ, իմ աշքերուս առջե իբր նկարած այդ խմբանկարը: «Երբ նոր բնակարան ստանաս, անոր պատեն պիտի կախեմ ձեռքովա»—ըստավ նա վերջին անդամ:

Բայց, ով մեծ զարմանք և հուսափարություն: Երբ երևան «Ինտուրիստ» հյուրանոցի նկարիչին աշխատանոց բնակարանին մեջ՝ իմ ներկայության, այդ այնքան սիրած Կոմիտասյան խմբանկարը Թերլեմեզյանը լնձայեց բանաստեղծ Եղիշե-Զարենցին: (որ նույնպես տարիներե ի վեր ջերմ երկրպագուն էր զարձեր այդ խըմբանկարին, բանաստեղծը նույն վայրկյանին երախտազիտության զգացումով մը համբուրեց նվիրատու նկարչին ձեռքը և ապա անոր ճակատը: Խոկ ևս այդ գեղեցիկ և հազվագյուտ նկարին հիշողությամբ մը միայն հետեւողս, կաղերսնմ այն անհատին (որուն ձեռքն է այժմ նկարը)՝որ իր մոտ պահած համայն հայության համար արդ թանկացին հիշատակը, իր ցանկացած ձեռվ հանձներ մեր պետական-նկարչական թանգարանին, իբրև անդին նմուշ մը Կոմիտասի գիտակցական կյանքին վերջին տարիներեն:

ԿՈՄԻՏԱՍ՝ ՐՈՒՄԵԼԻ-ՀԻՍՊԻԴԻ ՇԵՅՏԼԻՔԻՆ ՄԵջ

Գեղածիծաղ Վոսփորի ելքուղական ափին հանդչող Բումելի-Հիսար գյուղը դարերե ի վեր կհատկանշվի իր ամբակուռ պարիսպներով և աշտարակներով, որոնք շինված են Պոլիսը առնող Յաթին: Սուլթան Մեհմետի կողմէ:

Ըումելի Հիսարը բացի պատմական անցյալ մը ունենալի, իր Շեյխալիք կոչվող մենաստանով, ուր աերպիշներ կը բնակին, անվանի է դարձած նույնիսկ զրոսաշրջիկներու ուղեցույցներուն մեջ:

1912-ին ամառը օր մը երիտասարդ նկարիչ լուկուրոջո Զարեն Գալֆայանի հետ (ներկայիս նկարիչ ի Փարիզ) բարձրացանք Շեյխալիքի զագաթը:

Վոսփորի համայնապատկերով զրավված եինք, երբ հանկարծ մեր ականջին հասավ սրինդի մի ձայն:

Հետղնետե պայծառացող ախործալուր եղանակը, պատանեկա-



Բումելի-հիսար — «Շեյխուլիմ»

կան թարմ հիշատակի մը օդնությամբ, առջև բերավ տերվիշ
Բուհին:

Կանաչաղարդ, ծաղկավետ մարդագետիններով մոտեցանք մեզ
կախարդող երաժշտության:

Այդտեղ անսանք նկարչական հակա հովանոց մը, որուն շու-
քին տակ նստած գտանք նկարիչ Փանոս Թերեմեղայանը

Ավելի ուրախացանք տեսնելով բավականին հեռու, ծառի մը
տակ նստած Կոմիտասը, որ կունկնպես իր քովը ծալապատիկ
նստած սրնդահարը: Այս վերջինը տերվիշական բարձր և կոնաձե
գլխանոցին դատելով Շեյխալիքի վանականներեն մեկն էր:

Թերեմեղայանը մեզի ըսավ հետեյալը. «Կերծասին Կոմիտասը
այսօր հասավ իր մուրազին: Այս առտու որոշեցի առաջին շողե-
նավով Պումելի-Հիսար նկարելու գալ: Կոմիտասը ինձի միացավ
այն վստահությամբ, որ Շեյխալիքի մենաստանին մեջ պլոտի կրնալը
ծանոթանալ հայտնի սրնդահարին: Շեյխալիք հաօննենուա՞ մեծ ու
փոքր տերվիշներեն շրջապատվեցանք: Կոմիտասի համբավը մեղ
արժանացուց հյուրասիրական մեծ պատիվներու:

«Շեյխալիքի մենաստանի մուտքի հայրաթ աղբյուրեն պա-
պակնիս հազեցնելի վերջ հյուրասիրվեցանք սուրճով և շերպեթով
Ներկա եղանք անրվիշներու առավոտյան արարողության, որ կը
կատարվեր արարական և պարսկական երաժշտությամբ:

«Երաժիշտաներուն մեջ ամենն ավելի Կոմիտասը հետաքըր-
քը հայտնի սրնդահար Բուհին, որը նամազը վերջացնելին հետո
սիրահոժոր իր ժամերը տրամադրեց համբավավոր հայ երաժշ-
տագետ-երդիշին:

«Կոմիտասը հետաքըրվեցավ արարական և պարսկական երա-
ժշտառությանց՝ հայ եկեղեցական երաժշտության վրա ունեցած աղ-
դեցությունով..»

Երբ հասանք Կոմիտասին և տերվիշին մոտ, Կոմիտաս սրինդը
ձեռք առավ և սկսավ նվազել «Լուր-դա-լուր»-ը, հուզելով ա-
մենք:

Կոմիտասին ոտքերուն մոտ զլսելով և կծկտած կունկը բերեն-
դին:

Երբ «Լուր-դա-լուր»-ը վերջացավ, տերվիշ Բուհին տեղեն-
ցակելով, երկու ձեռքերը կուրծքին արտասվելով խոնարհեցավ
Կոմիտասին առջև ու զովեց հայ ազդը այդպիսի Աստվածառուը
որդի մը ունենալուն համար:

Երբ Թերլեմեղյանի խնդրանքին վրա Կոմիտասը երգեց «Մո-
կաց Միբզեն», քիչ հետո մեր շուրջը տեսանք նորեկ խումբ մը
հայ երիտասարդներ, որոնք Շեյխալիքի զրացի ամերիկյան Բո-
քըրտ-Դոլեճի աշակերտներեն էին: Իուհին, որ պահ մը հեռացած
էր, այդ միջոցին վերադարձավ, պղնձյա խոշոր աման մը լեցուն
սև և սպիտակ թութ բերելով: «Շեյխ Կոմիտասին արժանի ոչինչ
ունիմ հրամցնելիք, բացի իմ ձեռքերովս հասունցուցած թթենինե-
րուս առաջին բերքեն»:

Բոլորս հավաքվեցանք մեծ երաժշտագետին շուրջը և անոր
սրամիտ կատակներուն հետ կերանք մեղքանամ սև և կարմիր թու-
թը: Երեկոյան, Շեյխալիքի բարձունքեն տեսանք Պելքոզին գեղի
Բումելի-Հիոսար ժամանող շոգենավը: Սրնահար Բուհին կրկին
խաչածիելով իր ձեռքերը, գլուխը խոնարհած հրաժեշտ տվալ Կո-
միտասին, մաղթելով անոր երկար կյանք և կրկին տեսություն:

Անմոռանալի Կոմիտասը Զպուքլը հասնելնուս, իր ամենասիրած
գյուղի գեղեցկությանց դիմաց լիաթոք շնչելով, ըսավ. «Այս օրն
ալ իր հիշատակով կմնա մեր սրաերուն խորը»:

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՔԱՂԱՂԸ...

1912-ին Պոլսո ծովափնյա Գաաը-դյուղը իր գարնանային
ամբողջ գեղեցկությամբ կախարդեց երկու երիտասարդ նկարիչ-
ներս, Զարեհ Գալֆայանը և դիս:

Երիկնամուտի մը Գատո-դյուղին վերջին շոգենավով մեկնեցանք
Պոլսո Կամբջակին վրա անկյուն մը տեղավորված եինք, երբ հան-
կարծ լսեցինք շոգենավի ցոռվեին բարձրացող ծանոթ ձայն մը, որ
մեղ կը կանչեիր: Կոմիտասն էր՝ շրջապատված իր ամենատենված
ուղեկիցներով:

Խումբը բաղկացած էր պոլսահայ հայտնի մտավորականներե
և արվեստագետներե, որոնք կվերադառնային Ֆեներ-Պահչեի
Զիֆթե-Հավուզ կոչող զրոսավայրեն:

Երենց խոսակցության նյուբն էր Զիֆթե-Հավուզին մեջ
գտնվող հազվագյուտ գեղեցկությամբ պալատական աքրոր մը, ո-
քուն կանչերեն աղղված էին: Խումբի երեք հայտնի երաժշտագետ
երգահանները՝ Հարություն Սինանյան, Դ. Դավիթյան և Էտկառ

Մանաս, որոնք պատահմամբ Զիփթե-Հավուղին մեջ Կոմիտաս-ոյան խումբին էին հանդիպել, առանձին-առանձին պատկերացուցին օրվան իրենց երաժշտական ներշնչումները, զանոնք կապելով սիրային սումաններու, արևելյան միսթիցիզմ' և բնության վայելքի տպալուրությանց հետ:

Կոմիտասը չժխտելով Զիփթե-Հավուղի «Պալատական աքլորին» գիրեցիությունը, ավելցուց, որ անոր օտարոտի կանչերը հոգվույն ոչինչ չխոսեցան, միայն արծարծեցին իր հայրենի աքաղաղին անհուն կարոտը: Մեծ երաժշտագետը իր հայացքն ուղղելով երեք երաժշտագետներուն, ըսավ. «Իմ սիրելի դժբախտ հայորդիներ, ուր էր, որ դուք այսօք տեսնեիք ձեր հայրենի աքաղաղը... այն հայրենի աքաղաղը, որ իր քաղցր կանչերով, էջմիածնա վաղ ուսանողական տարիներես, հայրենի սիրույս հիմքը դրավ. Ո՞ւր է, ուր է հայրենի հողեն ու ջուրեն սնված իմ աքաղաղը, պիտի տեսնեմ, պիտի լսեմ գարծյալ զայն... Ա՛խ, իմ հայրենի աքաղաղը, որ օրն ի բուն դեգերելով փլատակներու, -դարավոր վանքերու բակերուն մեջ, կամ զլղացող առվակներու եղերքները, վաղ արշալույսն մինչ երեկո, իր զիւ կանչերով հոգվաւյս մեջ ամբարեց հայ ժողովուրդին անհուն ապրումները: Ափսոս, որ ձեր հոգվականչները տակավին օտարոտի կանչերով ձեզ կոգևորեն...»:

Մթաղնած իրիկունով հասանք Կալաթայի կամուրջը: Տաս ըռպես հետո Կալաթայի թյունելին Կոմիտասյան խումբը ուղևորվեցավ զեպի Բերայի երկարաձիգ պալոտան, որուն քովնափի փողոցներուն մեջ հետպհետե ցըվեցան անոնցմե շատերը:

Իսկ մենք հասանք Թաքսիմի հրապարակը: Երբ Կոմիտասը իր անքաժան լնկերով՝ Փանոս Թերլեմեզյանի հետ մեղ հրաժեշտ տվավ, ի սրտե մաղթեց, որ մենք արժանի ըլլանք օրին մեկը տեսնելու մեր հայրենի հողը իր հայրենի աքաղաղով...».

ԿՈՄԻՏԱՍԸ ԽՈՐԵՆ ԷՖԵՆՏԻ ԽՐԻՄՅԱՆԵՆՑ ՏԱՆ ՄԵԶ

Իմ երաժշտական դասավանդության սկզբնական շրջանին Կոմիտասի միջնորդությամբ սկսա դասավանդել հորս էջմիածնա վաղեմի մտերիմ՝ Խորեն եփենտի Խրիմյանի երեք օրդիներուն, Կարիներին, Սերիներին և Շուշիկին:

Կոմիտաս, իրեւ Խրիմյան ընտանիքին մեկ հարազատը, մեծ նախանձախնդրությամբ կհնեսեեր օրիորդ Խրիմյաններուն երաժշտական կրթությանը: Հաղիվ տասնըհինգ տարեկան Շուշիկ, բացի իր դաշնամուրային շնորհին, ցույց տվալ նաև հայկական ժողովրդական երգեցողական երգեցողությունն ըմբռնելու բնածին ճաշակ: Եվ Կոմիտասի հոգատար ջանքերով քանի մը ամիսնեն ղեռատի Շուշիկը զարձավ անոր Պոլստ առաջին հրապարակային համերգներուն փլնաբռված մեներգչուհին:

Վանեցի Խորեն էֆինտի Խրիմյան, եղբորորդի և հոգեռորդի Խրիմյան հայրիկի, մեծ հարգանք կվայելեր պոլսահայության լայն խավերեն:

Անոր Բերա-Բանկալթիի տունը այն նահապետական օճախն էր, որ անեղծ կերպով կպահպաներ հայ գավառական կյանքին նիստ ու կացի բարքերն ու սովորությունները:

Այդ հարկին տակ ես ծանոթացա գավառացի հայտնի գրողներու, հայրենասերներու, մտավորականներու, ինչպես նաև էջմիածնական բանասեր կրոնականներու և հայ խոշորագույն արվեստագնուներու, որոնց առանցքը կկազմեր մեր սիրելի Կոմիտասը:

Կոմիտաս վարդապետի Պոլստ մեջ ունեցած մտերիմ ընտանիկան շրջանակները հարցուրներու կհասնին, ոկոյալ իշխանական, մեծունաբուստաններու ապարանքներեն, մինչեւ համեստ մտավորականի և արհեստագործի տունները: Սակայն անոնց մեջ ամենահիշատակելին կմնա Խորեն էֆինտի Խրիմյաննենց տունը, որուն ընտանիքին մեծ ու փոքր անդամները, գեռ էջմիածնին Կոմիտասի մտերիմներն էին:

Նման առիթներով Խրիմյաննենց տունը կհավաքվելին իրենց հայրենակիցներեն և Կոմիտասի մտերիմներեն Թերլեմեղյան Ոհաննես և Նշան եղբայրները, իրենց ընտանիքի անդամներով, նույնպես խիստ հաճախ իսակուլյան և Ալեմյան ընտանիքները, ինչպես և բժշկական ուսանող վանեցի երիտասարդ Հայկ Գալճյանը, որ Կոմիտասի և Խորենի շատ սիրելին էր: Միշտ ներկա էր՝ Կոմիտասի անբաժան ընկերը, նկարիչ Փանոս Թերլեմեղյանը: Ներկաները իրենց անցյալ օրերու հուշերը կը պատմեին ճաշի՝ ընթացքին և ես մեծ հետաքրքրությամբ կը լսեի զանոնք: Այդ հուշեն, ըեն մեկ քանին, որոնք խորապես տպավորված են մտքիս մեջ, գրի պլիտի առնեմ իրենց կարևորության պատճառով:

1893-ին եջմիածնա մեջ կաթողիկոսական ընտրություն կը կատարվեր բարձմաթիվ վայրերե հասած պատզամավորներու կողմէն: Քանտիտաներն էին Խրիմյան հայրիկը և Օքմանյանը:

Վանքի բակլին մեջ, տասնյակ հազարավոր ժողովուրդ խըռնըլած, սրտատրոփ կսպասներ օրվան կարևոր լուրին...

Երիտասարդ Կոմիտասը, որ վանքի ներքին պատերուն մեջ փակված էր, ընտրության արդյունքը լսելով թղթիկի մը վրա հետեւյալը կը գընե կը նետե դուրսը գտնվող ժողովուրդին:

«Եջմիածնում, յոթանասուն երկու տարեկան հասակում, յոթանասուն երկու քվեով կաթողիկոս ընտրվեց Խրիմյան հայրիկը՝ որով կաթողիկոսական հարցը լուծվեց ի նպաստ Հայրիկի...»:

Ժողովուրդի մեջ կիյնա աննկարագրելի իրարանցում, զորում գոչում, Օքմանյանականները բռունցքներով և գավազաններով կը հարձակին Խրիմյանականներու վրա:

Ուշ երեկոյան, երբ Օքմանյանական եպիսկոպոս մը կմտնե միաբանության խուցերը և կուսի մեղադրել եկեղեցական օրինականությունը զանցառող իրեն անծանոթ միաբանին, երիտասարդ Կոմիտասը ժպիտը երեսին կբացականչե. «Սրբազն հայր, ժամ առաջ ուզեցի փրկել Խրիմյանականները, որոնք ինձ նման հայ ժողովուրդի ճշմարիտ շահը կպահնանջեին այսօր...»:

Դարձյալ Կոմիտասն էր, որ պատմեց հետեւյալը.

«1903-ին Եջմիածնա վանքին միաբանության նախանձուտ աշքերուն տակ, վեհափառ Հայրիկի առաջարկով, ևս շաբաթը երկու անգամ սկսա երաժշտություն ավանդել իր թոռնիկներուն, Խորեն էֆենտի Խրիմյանի երկու դեռատի աղջիկներուն—Կարինեին և Սերինեին»:

«Երկու աշակերտուհիներս քանի մը ամիսներու ընթացքին իրենց ընտանեկան շրջանակին մեջ, սկսան ազատ երգել «Հայաստան, երկիր զրախտափայր» և «Զայն տուր, ով ծովակ», որոնք Խրիմյան Հայրիկի նախընտրած երգերն էին:

«Եջմիածնա վանքի մեջ, երբ ծերունազարդ Խրիմյան Հայրիկը իր ցավատանջ կյանքին անքուն դիշերներով կտառապեր, իր երեք սիրելիները՝ Խորենը, Թերլեմեղյանը և ևս հերթով կհսկեինք

1) Կարինե Խրիմյանը, Ներկայիս Կարինե Ախիկյան, Երեանակը, եղած է Կոմիտաս վարդապետի 1-ին աշակերտը:

իր սնարին քով երկար ժամեր պատմություններ պատմելով՝ զբույցներ ընելով կմեղմացնելով իր ցավերը:

«Պատկառելի հայոց Հայրիկը սովորություն դարձուց իր անձնական գինիի ամենօրյա բաժինը նվիրել մեզ ըսելով. «Որդյակը սիրելիք, մի քաշվեք, իմ տեղն անուշ ըրեք Հայրիկին գինին»:

«Էջմիածնա վանքի այգիներին մասնավորապես վեհափառ Հայրիկի համար պատրաստված մարիսը»—կարմրավառ գինին կարճ ժամանակվան մեջ կախարդեց մեր երեք ընկերներուն քիմքը Նույն օրերուն հեռավոր վայրերն եկող հյուրերուն համար ճցիս սեղան մը պատրաստված էր Խրիմյան Հայրիկի մոտ, որուն կազմակերպի ես:

«Խրիմյան Հայրիկը նկատելով սեղանին դրված գինիին տարբեր գույնը և համը, մառանապետը կանչեց զայրութով և հրամայեց անմիջապես գինիի շիշերը իր անձնական պահեստին գինիովը փոխարինել: Բայց որքան մեծ եղավ զարմանքը, երբ Վեհափառին ականջն ի վար շնչեցի. «Փանոսն ու Խորենը Վեհափառ Հայրիկի գինվո տալառին վերջին մրուրն ալ քամեր են...»:

«Այդ օրը, ուշ երեկոյան, երբ ըստ սովորության երիտասարդ նկարիչ Փանոս Թիերլեմեզյանը մտավ Վեհափառի սենյակը իր գիշերապահ—զրուցողի պաշտոնով, Հայրիկը իր թափանցոր աշքերը ուղղելով անոր, ըսավ. «Ծո տղա, Փանոս, Եվրոպան քեզ աղեկ այլանդակեր է՝ նոր արվեստի մը ևս տեր ընելով...» Նկարիչը կը պատասխանե Վեհափառ տեր, նոր արվեստի յուրացումը Կոմիտասի և Խորենի վարպետությանը կպարտիմ»:

«Երբ ուշ գիշերին լուռ ու մունջ ներս կմանեի Հայրիկին սիրած երզը շուրթերուս, ալեզարդ հայրապետը սնարին վրայեն աչքերը դեպի ինձ դարձնելով ըսավ. «Այ Կոմիտաս, ծօ, տնաշեն տղա, աղվոր գինի ճնկելու արվեստը Պրուսային մի հետդ բերիր...» Այն ատեն ես ալ պատասխանեցի. «Վեհափառ Հայրիկ, Հայրաստանի անմահական գինին լնտրելու և անուշ ընելու արվեստը յուրացուցի մեր սիրելի Հայրիկեն...»:

Հավետ անմոռանալի կմնան նաև Պորեն էֆենտի Խրիմյանինց «բարեկենդանյան» ճաշկերությունն հաջորդող այն գեղարվեստական ժամանցները, որոնց մշտական դեկավարն էր Կոմիտասը»:

Այդ մտերիմ շրջանակին մեջ Կոմիտասը կարելի էր ճանչնալ

1) Մարիսը—թթվաշ:

իր ամբողջ էությամբ։ Անոր ծայրահեղ համեստությունը, բարեհամբյուր, քաղցը ու անկեղծ բնավորությունը, մեծ ու փոքրին հանդեպ ցույց տված սիրալիրությունը կըրավեին բոլորին սըրտեր։ Մեծ երաժշտագետ-երդշին ոգևորությունը իր գաղաթնակետին կհասներ, երբ ծայր կառներ իր սկսած հայ ժողովրդական երգն ու պարը, սրնդային կամ ձայնական երաժտության քաղցրահնչուն ծփանքներով ողողուն...»

Կոմիտասի բացառիկ վարակիչ ոգեստությունը զապահակավորպատուտակներու նման շարժման մեջ կղներ ներկաները երգ ու պարին մասնակից ընելով ամենամեծն մինչև ամենափոքրը։

Նման երեկոներեն կը հիշեմ «Շորոր» հերոսական պարը, զորկիատարեին Կոմիտասը և նկարիչ Թերլեմեղյանը։ «Շորոր» հայկական ժողովրդական պարին մեջ իրարու չզիջող երկու վարպետները ձեռքերնին մեկ-մեկ սուր բռնած, սկզբնական հանդարտքայլերով, մարմնի ճօճումներով հզոր և վեհապահն վերջավորության մը կհասնեին...»

Անմոռանալի էր նաև «Հոպ-հոպ» հայ ժողովրդական պարերգը, զոր Կոմիտաս կերպեր բազմոցին վրա ծալապատիկ նստած։ Նա իր ոիթմիկ ծափերուն և երդին միջոցով կհրահրեր մանավանդ իրեն մերձափոր ընկերող՝ Փանոս Թերլեմեղյանի ոգեստությունը։ Այդ ուրախալի պարն աւ, իրեւ երեկոյան հրաժեշտի վերջին մասը, կվերջանար դինիի բաժակներով և Կոմիտասի հայրենասիրական մաղթանքներով։

1920-նոյեմբերին, Թիֆլիս բանաստեղծ Հովհաննես Թումանյանի տանը. (Վողնեսեսկի № 18), ներկա էին Հովհաննես Թումանյանը և իր ընտանիքը, նկարիչներ Գևորգ Բաշինջաղյան և Եղիշե Թաթեսոյանի տիկինը Ժիւմաթին, բժշկապետ և նկարիչ Զարգարյանց-նկարիչ Գրիգոր Շարբարչյան (Գիգո), ինչպես նաև երաժշտագետ Ռուբեն վարդ. Մանասյան և երեք իշմիածնական արտասահման մեկնող առաջնորդներ։

Ասոնցմետ մեկուն, մեր վաղեմի բարեկամ Տիրայր եպիսկոպոսին շնորհիվ ես առաջին անգամ ծանոթացա Հովհաննես Թումանյանին և իր ընտանիքին։ Իբրև Պոլսեն նոր Կովկաս եկած, խընդրեցին պատմել Կոմիտասի մասին։

Կոմիտասը իր աքսորավայրեն վերապառնալին քանի մը շաբաթ վերջ 1915-ի հուլիսի 14-ին, ներկա եղավ իր վաղեմի ըն-

կերներեն մեկուն հարսանիքին: Իբրև հարսի դպրոցական ընկերուհի, հորս ալի պաշտոնե ներկա ըլլալուն, ես ալ օգտվեցա հանգամանքեն..:

Նույն տարվան, ապրիլի 11-ին Պոլսո մեջ հարյուրավոր հայանի մասավորականներուն աքսորը և ապա տնունց հրեշտավոր տանձանքներով խողխողվիլը, վաստ տրամադրություն ստեղծած էր հարսանիքին մեջ, ուր, ինչպես ըստ, ներկա էր աքսորավայրերու դժուային տեսարաններու ականատես Կոմիտասը:

Հարսին հայրը, Պոլսո մեջ քանի մը սեբունդներ դաստիարակած հայտնի գեղագիր-մանկավարժ Միհրան Տեսքմեճյանը, ի գուր հայրական քսակը բացեր էր, իր մեկ հատիկ աղջկան՝ Նոյեմիին հարսնիքը շքեղ կերպով կատարելու. .

Այս օրվան պես թարմ կտեսնեմ այդ հարսանեկան օրը, մեր սիրելի և տարաբախտ Կոմիտասի նիստ ու կացի բոլոր մանրամասնություններով:

Պատիկ արարողության միջոցին Կոմիտասը հարս ու փեսային և կնքանոր դիմացը, պսակիչ քահանային կողքին կանգնած, զեղին ծաղկավոր ոսկեթել շուրջառը ուսերուն, ավետարանը ձեռքերուն մեջ բռնած կկարգար իր քաղցր ձայնով:

Պատիկ արարողութենեն վերջ, կհիշեմ իր թախծոտ դեմքին արտահայտությունը և իր փառլող սե, խոշոր աչքերը...:

Այդ հարսանիքին սակավաթիվ հրավիրյալներու մեջ էր նաև Պոլսո «Բյուզանդիոն» օրաթերթի խմբագրավետը Բյուզանդ Քեչյան, որ Կոմիտաս վարդապետին հետ նոր իր վերապարձած աքսորավայրեն, և իրար «Դողզոթա բարձրացող եղբայրներ» կանվանեին...:

Հյուրասրահին մեկ անկյունն որված էր Նոյեմիի դաշնամուրը, որուն ձեռք չփափուց Կոմիտասը: Բայց առաջարկեց երիտասարդ նվազողներուս և հարսին երաժշտության դասատու իստալացի Ռոմանոյին, որպեսզի քանի մը գասական գործեր նվազենք: Կոմիտասը դաշնամուրին քով նստած, մեր նվազը մտիկ ընելե և վարկյան մը խորհելե վերջ, հայտնեց, որ Պախի և Հենալի երաժշտության հանդեպ մասնավոր սեր ունի: Հետո կարծես երազե մը սթավիվելով ավելցուց: «Պասական երաժշտությունը շատ աղդեց վրաս...» Հետո սկսավ տխուր շեշտով մը պատմել աքսորավայրին մեջ տեղի ունեցած հետեյալ դեպքը: «Չանկըի բանտին մեջ,

թյուրք ժանդարմայի մը հսկողության տակ, անոթի և ցրտահար քաղղակեցներս կողք կողք է կմզկտայինք և կսպասեինք ահավոր բաժանման: Ես երգի մը միջոցով հայտնեցի միտքս մեզ սպառնացող մոտալուտ ընաջնջման մասին: Այդ պահուն թյուրք ժանդարմը աննկատելիորեն ետես մոտենալով հանկարծակի երեսիս ասլտակ մը հասցուց... Կըսեն թե ժամանակը կդարձան ամեն վիշտ, բայց այլ վայրենի ժանդարմին հասցուցած նախատինքը երբեք պիտի չկրնամ մոռնալ..»:

1915-ի հուլիսի 14-ին, այդ հարսանեկան օրը Կոմիտասի գիտակական կյանքին վերջին օրերերեն մեկն էր: Միայն հարսանեկան սեղանին շուրջ քիչ մը ողկորվելով երգեց, «Կոռունկ», «Մոկաց Միրզեն», «Հորովել» երգերը և ատոնք Կոմիտասի ներքնաշխարհի ալեկոծությանց արտահայտությունները եղան:

Այդ օրը նա այլևս ուրիշ Կոմիտաս էր: Ներկաներուն կը փոխանցեր իր կրած մղձավանջին սարսափը, որ զիշել ցերեկ զինքը հաւածած էր: Իր երգած երգերը 1915-ի թյուրք ուժիմին մահառիթ ճիրաններուն տակ խողխողված իր նահատակյալ ընկերներուն թափիծով լեցված էին:

Այդ հիշատակելի գիշերեն քանի մը շաբաթ վերջն էր, որ հայրս միջօրէի մը առն մանելով, հայտնեց Կոմիտասի հոգեկան ծանը տակնապներու մասին, որոնք տեղի էին ունեցել զիշերվան 12-ին սկսյալ մինչև առավուայան 5-ը...:

Տարբախտ Կոմիտաս վարդապետի տան անմիջական զրացի չարենց բնտանիքը, զիշերային խոր լոռության մեջ, իրենց ննջասենյակի կից պատեն, ժամերե ի վեր լսած էր անոր պոռչառուքը և դաշնամուրին թափահարումը: Խոհարարը նունյալիս լսած էր զիշերային անսովոր ազմուկը և լուր տված էր Կոմիտասի աքսորի ընկեր բժիշկ Վահրամ Թորգոմյանին:

Այդ գմբախտ լուրը ցնցեց ամբողջ պոլսահայությունը: Ուխտաեղի մը դարձավ Կոմիտասի երեք հարկանի բնակարանը, որուն օր ու զիշեր Բանկալթի հնագարյան ապդ. գերեզմանատան վրան նայող պատշաճամին պատուհանները փակված կը մնային: Թափուր մնաց և այն անկյունը, ուր գարնանային և աշնանային ուսածագերուն նա անչափ կսիրեր նստել թռչնոց գայլայլիկները լսելու...:

Անզուգական Կոմիտասին պատահած հանկարծակի դժբախ-

տության պատճառը, պոլսահայ և օտարազդի բժշկապետներու կարծիքով նույնն էին, անոնք միաբերան աքսորի ահն ու սարսափի կապատճառաբանեին:

Անհերքելի է, որ աքսորի տառապահքը զինքը հանկարծ դղեանեց և իր հոգեկան տագնասալները առաջ եկան աքսորեն անմիջապես վերջը:

Այդ նույն թյուրքելը, որոնք տարիներով զինքը գովարանեցին, հարգեցին և մամուլի էջերով պանծացուցին իրեւ հայկական արվեստի մեծ վարպետ, սակայն երբ կարգը հայ ջարդելու եկավ, ամենայն պաղարյամբ աքսորի և ջարդելու դրկեցին զինքը: Այդքանն ալ չբավեց, թուրք մտավորականներ, որոնք միևնույն կեղծավոր փառաբանիչներն եղած էին, օգտվելով իրենց սարքածահավոր ջարդերեն և դրամատիրական մեղսակից տերությանց քաջալերանքեն, ուղեցին հայ ազգին մշակույթն ալ սովորական լինչպես:

Ահավասիկ ուրիշ վկայություն մը ևս, թե ինչպես ջարդարար սուլթանական Թյուրքիան ուղղակի պատճառ դարձավ Կոմիտասի հոգեկան վկայություն:

Ենկյուրի երկաթուղային՝ կայաբանն կիշնենք: Քանի մեր ճամբան կշարունակեինք և մարդաբնակություններե կը հնուանայինք, այնքան մեր հոգիները կխոռովեին և մեր մտքերը չարագուշակ մտածումներով ինքնալլկուժի կենթարկվեին: Զի ամեն տպառաժի և ամեն ծառի ետև պահված ավաղակներ տեսնել կկարծեինք: Հայ ժողովրդի շինական երգերու անզուգական վարպետ Կոմիտաս, որ մեր կարգին մեջ կզանվեր, արգեն մտքի տարօրինակ տրամադրություններ կը ցուցներ և հաստացմատ ծառերը շարժուն և հարձակող ավաղակներ կարծերով միշտ իր գլուխը վերաբերույիս փեշերու ներքեւ կշանաբ թագներ, որսորդի երկյուղեն ավազի տակ գլուխը թաղող կաքաղաքարու նման: Կթախանձեր, որ պահպանիչ ըսեմ իր գլխուն վրա, հուսալով վերագանել իր խռովահույզ հոգիին հանդարտությունը:)

Երբ Կոմիտաս վարեապետը սկսավ իր մելամաղձոտ և որտառուչ տեեր ողորմյան, ծայր առավ հեկեկանք մը ամեն կողմեն,

¹⁾ «Հայ Գողգոթան», հեղինակ Գ. Պալաքյան, Վիեննա-Միլթարյան տպարան, 1922 թ.:

որը հնար չէր դապել Կուլայինք ամենքս ալ տվու պես. կուլայինք մեր ձգած սիրելիներուն վրա, կուլայինք մեր ճակատագրին վրա, կուլայինք մեր աղջին անբախտություն վրա, կուլայինք անցուցած մեր արյունի օրերուն վրա, առանց ենթադրելու թե արյան աշխարհավերջ աննախընթաց նոր փոթորիկներու արդեն նախօրյակին կը դտնվեինք, երբ սուլթանական Տաճկաստանը՝ մեր զարավոր թշնամին պիտի փորձեր ի մի հարված բնաջնջել մեր աղդը և հայրենիքը Մեր մեջեն ամենաքարացյալ սառնասիրտներն իսկ կմասնակցեին այս ողբ ու կոծին, որ երբեք բռնազրոսիկ չէր, ընդհակառակը, հակառակ զսպումի ամեն ճիշերու, կուգար մեր տանջված հոգիներու խորքերեն և հուզումի պութկացող ներքին հորձանքներեւ. Թերեւ տարաբախտ Կոմիտասը իր ամբողջ կյանքի մեջ այսքան հուզիչ երգած չէր երբեք «տե՛ր ողորմյան»:

ԿՈՄԻՏԱՍԸ «ԳԱՐԱԳԵՂԻ ՊՈՂԱԶԱՔԻ»-ԻՆ ԽԱՆՈՒԹԻՆ ՄԵԶ

Պոլսո ընտիր խմորեղենաց հիշյալ համբավավոր խանութը կդանվի. Պոլսո կամուրջին Ղալաթիր կողմը. Հստ մեր մեծերուն պատմածներուն, այս խանութին տերերը սերունդեւ սերունդ, մեծ հարստությանց էին տիրացած:

Գառագեղի Պողաջաճիկ խանութին մեջ սովորություն դարձած էր ծանոթներու հանդիպումը և զիրար հյուրասիրելը:

Հիշյալ խանութին մեջ երբեմն կպատահեի Կոմիտասին և իր սովորական ընկերակիցներուն:

Խանութին տերը, Ալի-աղա, Կոմիտասը կճանչնար և կը պատվիր:

1913-ին Պոլսո մեջ թյուրք-պուլկար պատերազմին շշուկները, ինչպես միշտ, գարձյալ պատմառ ստեղծեցին թյուրք արյունարու կառավարությունը ատամ կրճատություն պոլսահայության դեմ. Այդ օրերուն Կոմիտասի անհեռուն կամքով կրկնապատկվեցան գուսան երդչախումբին համերգները, որոնք տեղի կունենային թե Բերայի սրահներուն և թի Շահսեմի Պաշլի (նախկին նայումի). Թյուրքական թատրոնին մեջ. Այդ վտանգավոր օրերեն մեկը, եղբ դեպի Կոստոր երտմշտակուն դասավանեղության կերթայի, պեղմիքացի ընկե-

բուհիս հետ Գառագեղի Պաղաջանիի խանութին մեջ պատահեցանք Կոմիտասին և իր ընկերներուն Այս անդամ վոխանակ սեփականատիրոջ Ալի-ազայի, անոր տղան՝ եվրոպականացած արտաքինով Զեքի պեյլ զայն դիմավորեց և շողոքորթական բարեներով անոր որդիսությունը հարցնելեց վերջ ավելցուց, որ Շահզետե Պաշիի լսած դուսան երդշախումբին համերզը անմռունալի և դեղեցիկ տաղավորություն ներդրծերէ է իր վրա և մեծ երաժշտագետ Շեհիս Կոմիտասին հետ այս անակնալ հանդիպումը աստվածային շնորհը մը համարելով, կինդրեր Կոմիտասին, որ այդ օրը ընդունի իր հյուրընկալությունը: Զեքի պեյլ հրամանով, խանութին սպասավորները ծրաբներ պատրաստեցին Կոմիտասին խումբին համար Բայց Կոմիտաս մերժեց եղած նվերը և ըսավ. «Չեղ զմայլեցնող երգերը հայ ժողովուրդին սեփականություններն են, ոչ թե իմ: Անոնք թող սեփականություն զանան նաև աշխարհիս այն աղջերուն, որոնք ի սրան զիան զնահատել հայ զարավոր ժողովրդին սոեղծագնրծական կարողությունը: Թող ամչնան այն մարդիկ, որոնք հայուն նման աղդ մը կհալածեն»:»


ԿՈՄԻՏԱՍ ՊԱՐՏԻԶԱԿԻ ՄԵջ

Պոլամերձ Պարտիզակը Նիկոմիդիոս ճովախորշին դեմ հանգիման կանգնած բնության լիասատ բարիքներով շենցած գյուղաբարք մըն է:

Ծովահայաց Պարտիզակի երկու հազար տաւն բնակչությունը միայն հայերն քաղկացած ըլլալով, կիռչվեր Հայդյուզ: Հակառակ թրթական դավառով մը ըլլալուն, անոր հայ բնակչությունը անեղծ կերպով կզանգաներ իր նախնյաց բարքերն ու սովորությունները Առանձին բարբառին հետ աներ իր տարագը:

1912 թվականին սկսյալ Պարտիզակի պետական պաշտոնեության և գովառապետին հայ նշանակվելը սպեռուեց պոլսահայությունը: Այլևս Պարտիզակի հայ գյուղը զարձավ պոլսահայերունիքներուն ամսառնոցը:

1913-ի ամբ սկս, Կոմիտաս վարդապետը իր քանի մը ընկերներով Պարտիզակի մեջ իջևանեց իր վարդիմի բարեկամին (հայր



Իզմիտի ծովալսորշը

Արսեն Ղաղիկյանի¹⁾ մոտ Ամեն օր վաղ առավոտյան, Պոլսեն առառանց եկող մասվորականներ, արվեստագետներ, բարձրագույն վարժարանի ուսանողներ, «Գուսան» երգչախումբին աշակերտներն շատերը իրենց լնամանիքի անդամներով, օրվան ուտերիքնին շալկած կաճապարեխն դեպի Լուսաղբյուրի հաստարմատ ընկուղենին, միանալու իրենց սիրելի երաժշտագետ-երգիչ Կոմիտասին:

Պարտիզակցի Հայր Արսեն Ղաղիկյանի շնորհիվ մեծ երաժշտագետը շատ շուտ ընտելացավ դարավոր անտառներուն, բարձրաբերձ դալարագեղ սարավանդներուն, հորձանուտ ջրվեժներուն և ձորերուն մեջ հրաշքի մը պես բացվող դմբուխտադեղ մարդագետիններուն:

Կոմիտասը գիտեր թե օրավան որ ժամերուն, որ զբոսավայրն ուներ իր բացառիկ հմայքը:

Ինչ անմուտնալի պատկեր էր, երբ ամեն առտու, Լուսաղբյուրին մոտ երկսեռ մանունկներու և երիտասարդներու խումբեր մեկզմբեկու հետ մըցելով աստաջինը՝ կվազեխն իրենց սիրելի Կոմիտասսի աջը համբուրելու Կոմիտասը, թեանցուկ իր սիրելի հայր Արսեն Ղաղիկյանին ու Ռուբեն Զարդարյանին և շրջալատված իր լնկերներով, կերթար Դեղին աղբյուրը: Այնտեղ կարմբավազ գետնաբուխ աղբերակին շուրջ, մեծ երաժշտագետը ճարպիկօրեն սոստնելով աղյուսաշաղախ մամուապատ քարերեն, իր ձեռքի թղթե բաժակներով իբրև շանմահության ջուր», կատակելով ասաջինը կհյուրասիրեր հայր Արսեն Ղաղիկյանը:

Կոմիտասը հիշյալ աղբյուրի հանքային ջուրին գովքն ընելով կը զրգուեր մեծ ու փոքրին ախսորժակը: Իսկ երբ երիտասարդ աղջիկներեն այդ հանքային թթու ջուրը խմած ատեն դեմքի ծամածոռթյուններ կը նեին, երաժշտագետը սրամտությամբ անոնց կը սեր: «Այս ջուրեն խմողը Հայաստանի աղջիկներուն նման հավիտենապես կարմբավառ շուրթեր և այտեր կունենաա...»:

Երբ «Դեղին աղբյուր»-ին խումբը կթեքվեր գեղի «Ճատկան ջուր»-ին պաղալի արահետները, Կոմիտասի առաջարկին վրա երկսեռ երիտասարդությունը ժրաջան մեղուներու նման թուփեթուփ սստուակելով կքաղեր ծաղկանց և հյութեղ դաշտային պըտուղներու տեսակները... Եվ բաղդավոր կհամարվեր այն զույգը,

¹⁾) Հայր Արսեն Ղաղիկյան-Վենետիկի Մխիթարյաններեն, հայտնի բանասեր և թարգմանիչ, ծնված Պարտիզակ: Ծ. 4.



Պարտիզան — «Աեր ին արտեր»

որ ամենեն շուտ կհրամցներ իր պաղալից դամբյուղը Կոմիտասին և անոր ընկերներուն:

Թաշտային կիզիչ արևին տակ ճամբուն տաղտուկը շատ շուտ կը փարատեր Կոմիտասի կատակներով և երգերով. կը հառնեինք «Յատկան ջուր»-ի ձորը Այստեղ, ջուրերու ձայնին հետ, կլսեինք թուփի թուփ մեղ ծանոթ թուշուններու երգը:


Հստ Կոմիտասի արտահայտության, Պարտիզակի «Ազգային Հանրապետության» զբոսավայրերուն թագուհին կհանդիսանար «Յատկան ջուր»-ի ձորը Անոր բուսական գեղեցկության հետ կը մըցեր իր հոյակապ ջրվեժը

«Յատկան ջուր»-ի աճեղաղորդ փրփրան ու սպիտակ ջուրերը ետզհետեւ ոլրիսմակի բոլոր գույներն ստանալով, կը հոսեին ավաղանման փոսերու մեջ, ուր առանձին հորձանքներով կը աժնըվեին տարբեր ուղղություններու...»

Շատ քիչերն էին, որ արհամարնելով վտանգը, կը մազլցեին անոր մամուսպատ հսկայակույտ քարերն ի վեր: Անոնցմե առաջինն էր Կոմիտասը Այդ տեղեն Կոմիտասի երգած «Հայաստան, երկիր գրախտավայր» երգը կը տարածվեր գեղի հեռավոր գաշտավայրերը, ուր ցորենի կալերուն մեջ աշխատող հայ շինականը, գերանղին և մանզաղը թողած, կորոներ հրաշալի երաժշտության աղբյուրը... Երիտասարդությունը խումբերու բաժնված «Յատկան Ջրվեժ»-ին շուրջը ժրաշան մըջյուններու պես աշխատանքի կլըծվեին: Շատեր դաշտասեղանի պատրաստությամբ կը պարզեցին: Ուրիշներ խարույկներ կը վառեին: Մեկ քանի նկարիչներ ալ, որոնց մեջ տողերուս գրովը, «Յատկան Ջրվեժ»-ին դիմացը նստած կը նկարեին:

Երբ մեր խումբը լուսնի առաջին շողերով Լուսաղբյուրին առջև հասավ, այնտեղ նշանարեցինք մեր տանուտեր Կարապետը, որ գերանղին ուսին, գեղի մեծ երաժշտագետը հառաջանալով, Կոմիտասի ձեռքը համբուրեց և ըսակ. «Փառք, հեյ տեր Աստված, ողորմությանդ մեռնեմ, ուրկից դրկեցիր մեղ Հայաստանի այդ պյուլպյուլ...»:

Կոմիտասը «Ազգային Հանրապետություն» կոչված Պարտիզակին: մեջ ուներ իր սիրելագույն վայրերը, սկսյալ «Թղուկ Աստառ»-ին մինչև ծովահայց հրաշագեղ բարձունքները, որոնք պոլսահայ երազկոտ բանաստեղծներուն, նկարիչներուն և սիրող զույգերուն նախընտրած անկյունները կհանդիսանային:



Պարտիզակ—«Վերին կալեր»

1913-ի ամբանը, Պարտիզակի մեջ Կոմիտաս վարդապետին ներկայությունը առիթ ստեղծեց ժողովրդական խանդակառության: Պոլսահայության ամեն դասակարգե, նույնիսկ կղերական հայության գեմքեր ամեն օր խումբ-խումբ կուգային Պարտիզակ, վայելելու հայ գյուղին մեջ աղասի շունչով կատարվող Կոմիտասյան տոնակատարությունները...:

Կարելի է արդյոք մոռանալ Պարտիզակի «Վերին կալերն» ու «Վերին արտերը», ուր հայ շինականը իր հնձած ոսկեվառ ցորենը շեղջ առ շեղջ դիզելեն հետո, կակսեր նահապետական գործիքներով կալսել կիզիչ արեին տակ, մինչ հեռվեն կը լսվեր Կոմիտասի «Հորովելք»-ը...

Իսչպես չվերհիշել «Ս. Մինասի» հայտնի կաղնուտի անտառներուն մեջ տոնի օր մը:

Համատարած կանաչությանց մեջ հորձանուտ ջուրի մը մոտիկ, Կոմիտասը կրթնած ավերակ մատրան խաչքարին, որ դարեր առաջ Հայաստանին բերված էր, կերպեր «Լուր-զու-լուրը»..:

Անոր քով նատած էր Ռուբեն Զարգարյանը, իսկ ուներուն մոտ ծնրադրած կհեկեկար պարտիզակցի ծանոթ շինականը՝ ածխագործ Կարապետ աղան..:

Այդ անմուսանալի պահը, երեսուն երեք տարի վերջ, ևս փոքր-ձեցի կտավին հանձնել իմ համեստ ուժերով: Նկար մը, զոր կտահեմ իբրև թանկագին հիշատակ:

ԿՈՄԻՏԱՍԻ «ԱՆՈՒՅ» ՕՓԵՐԱՅԵՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ՝ «ՓԸԹԻ-ՇԱՆԻ» ԶՄԵՌԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻՆ ՄԵՋ

Մեծ երաժշտագետ-երգչին հասած հոգեկան դժբախտութենեն վերջ, անոր աշակերտներն խումբ մը միանալով Պոլսո հայ տրամադրիկ թատերական խումբին երիտասարդ դերասաններուն (օրոնցմեռ շատերը նույնպես Կոմիտասի «Գուսան» երգչախումբին անդամներն էին) 1919-ի դարնանը «ՓԸԹԻ-Շանի» ձմեռային թատրոնին մեջ, դերասան Աշոտ Մատաթյանի զլիսավորությամբ առաջին անդամ ըլլալով ներկայացրեցին Կոմիտասի ձայնագրած «Անուշ» օփերային որոշ հատվածներ՝ իր նախնական վիճակով: «ՓԸԹԻ-Շանի» ծովածալակ հայ հասարակությունը օվացիաներով դիմավո-

ըեց տարաբախտ կոմիտասի «Անուշ»-ի հատվածներու բեմադրությունը, որը զժբաղտաբար եղավ առաջինն ու վերջինը...»

Այդ օրվան «Անուշ»-ի ներկայացման մեջ իրենց երաժշտական և բեմական լնդունակությունով աչքի զարկին «Գուսան» երգչախոռմբի երիտասարդ սանութիներեն Արշալույս Թերլեմեղյանը (Անուշի դերին մեջ) և Ատրիկ Դերձակյանը¹⁾ (Անուշի մոր դերին մեջ):

Այդ օրվան դերակատարներին արժանի են հիշվելու Տրդատ Նշանյանը (Մոսիկի դերին մեջ), Եղվարդ Զափրաստը, դերասանուհի տիկին Հրաչյա Դերձակյանը և ուրիշներու:

Այսօր, երբ մեր սիրելի սովորական աղատ և երջանիկ հայրենիքին ամեն ծայրերեն հնչող նոմիտասյան ստեղծադրությունները հայ ժողովրդի սեփականությունն նն զարձեր, ժամանակին է օտար և մութ անկյուններեն աղատագրել Կոմիտասի հորինած «Անուշ» օֆերան:

Լիահույս եմ, որ համեստ հուշերում լնթերցողները, իբր նվիրական պարտականություն, ոլիտի օգնեն այդ գործին և գեղեցիկ օր մը հրապարակ պիտի դա այդ մեծարժեք ստեղծագործ ծությունը:

ՎԵՐՁԻՆ ԱՆԳԱՄ ԿՈՄԻՏԱՍԻ ՄՈՏ

1915-ի աշնանավերջին, տարաբախտ կոմիտասի հին բարեկամ, ներկայիս խնամատար Բժիշկ Վահրամ Թորգոմյանի արտոնությամբ, հայրս որոշեց տեսնել հիվանդը՝ հոգեկան բուժարանին մեջ:

Կը կնամի թախանձանքիս վրա, հայրս հավանեցավ, որ իրեն, ընկերանամ:

Թաքսիմեն կառքով մը հաղիվ մեկ ժամեն հասանք Շիշի անհորիզոն դաշտերուն մեջ մեկուսացած, պարտեզապատ մեզ ծանոթ Փրանսական մասնավոր հիվանդանոցը, Հոքիտալ տը-լա-բե, որուն մեկ մասն ալ հատկացված էր հոգեկան մասնավոր բուժարանին:

¹⁾ Ներկայիս դերասանուհի՝ Երևանի Աղբեկանական թատրոնին մեջ:

Երկաթյա դռնեն մեղ դիմավորեց Փրանսացի հիվանդապահու-
հի մը, որ մեզ առաջնորդեց հոգեկան բուժարանը, ինձի առաջար-
կելով նստիլ և սպասեց Հաղիկ նստած, ինձմե քիչ հեռու առաջին
հարկի պատուհանին առջև տեսա Կոմիտասը և անոր մոտ հակող
հիվանդապահ: Կոմիտասը ոռվորական ոքեմը կը կըեր. գլուխը
ծածկած էր թափշա փակեղով:

Իմ վրաս ձգած անթարթ նայվածքեն արդեն հասկացա, որ
իը կորուստը վերջնական էր:

Մեր տունը եկողներուն հայրս խոր թախիծով կլրկներ մեծ
հոգերույժ բժշկապետին լսածը, թե լսա իը կարծիքին, անբու-
ժելի է Կոմիտաս վարդապետին հասած դժբախտությունը...:

Իսկ ավելի հետաքրքրվողներուն, երբ անոնք մանրամասն
կուղեին հայրիկես տեղեկանալ Կոմիտասի գիտակցական կյան-
քի մասին, հայրս վշտալիր ձայնավ մը հետեւալն ըսավ. «Հոգե-
բույժ բժշկապետին ներկայությամբ 15 վայրկյան իմ տված
հարցումներուս, տարարախտ Կոմիտասը միայն թյուրքերեն լեզ-
վով շարունակ կը կրկներ. Երբեք չեմ ճանչնար ձեղ և երբեք ալ
չեմ ուղեր ձեղ հետ խոսիլ»:

* * *

1927-ին, երբ Փարիզեն Թիֆլիս եկալ ջութակահար փոքր
եղբայրո՞նքով Մեսրոպյանը, սկսա մանրամասն տեղեկություն-
ներ քաղել մեր տարարախտ Կոմիտասի մասին:

Եղբայրս պատմեց, որ ամեն կողմե Փարիզ հասնող հայերուն
փափաքն էր այցելել Կոմիտասին: Անոր բուժարանը կը գտնվեր
քաղաքին արվարձաններեն Վիլ-Ժուիֆ-ի մեջ: Բժշկին արտօնու-
թյամբ կարելի էր իրեն այցելել և նույնիսկ երաժշտության մի-
շողով հիվանդը զբաղեցնել

Փարիզի հայոց եկեղեցին առաջնորդ Քիսպարյանի առաջար-
կով, հայրս և եղբայրս, երաժշտական քառյակի մը հետ կհասնե-
ին Վիլ-Ժուիֆ և Կոմիտասը կը գտնեն կասքենիի մը շուքին
տակ կեցած, գիշերանոցով, բուրովին կերպարանափոխ և նայ-
վածքը անկենդան: Կը փորձեին երաժշտությամբ սթափեցնել ա-
նոր խանգարված ուղեղը, բայց իդուր: Կոմիտասը անդիտակ իը
շրջապատին, դառնալով զեպի ծառը, լուս ու մունջ, կակսի խա-
ղալ ծառին բունին հետ:

Ներթական բժիշկը այցելությունը բավ համարելով՝ հիվանդը
կը հեռացնե:

1929-ին, Թիֆլիս Հայաբտան մեր նկարիչ ընկերներեն եղիշե Թագեռոյան և Գիգո Շարբարջյան անակնկալորեն ինձ մոտ հյուր բերին Պոլսո մեր տան վաղեմի ծանոթ նկարիչ Փանոս Թերեմեղյանը, որ Փարիզին վերադառնալով, հյուրասիրված էր եղիշե Թագեռոյանի տունը:

Այդ այցելությունը առիթ դարձավ, որ մենք երկարօրեն խոսենք Կոմիտասի մասին: Զանացի Թիգրիմեղյանին տեղանալ Կոմիտասի Փարիզի բուժարանին մեջ անցուցած կյանքի մասին Թերեմեղյանը պատմեց:

«Հաճախակի տաբաբախտ Կոմիտասին այցի ատեն, այս կամ այն հայ ընկերոջ խնդրանքով, կիործեի զայն հետաքրքրել Վանի և Մուշի ժողովրդական երգ ու պարով, այս անզամն ալ, Ամերիկային Փարիզի վերադարձիս, իբրև նվիրական պարտականություն շտապեցի Կոմիտասի մոտ .. Հոգեբուժարանի բժշկապետին արտօնությամբ մտա սենյակը, բազմոցին մեկ անկյունը նստած էր Կոմիտասը ծալապատիկ, լուս ու մունջ: Անոր գունատ դեմքը, վտիտ մարմինը և արդեն սպիտակած մուրուսը ալեկոծեցին սիրտա: Անդիմազբելի հուզումով փաթաթվեցա իրեն, ջերմազին կարուտով համբուրեցի զայն կրկին և կրկին արցունքներս թափվեցան իր այտերուն վրա: Հազիվ կրցա իր թանկագին որպիսության պատասխանը ստանալ կես ժամե ավելի իր քովը նստած, աչքերս իր տարտամ հայացքին հառած ձեռքերս իր ոսկրացած ձեռքերուն մեջ: : Իմ ամեն մեկ հարցիս ճշգրիտ լակոնիկ պատասխանը պահ մը միսիթարական թվեցավ: Իմ առաջին հարցումներս եղան երածշատության մասին, կյանկար արդյոք հայկական կամ եվրոպական երաժշտություն լսել, կամ թե ըրն ավելի կգերադասեց: Կոմիտասի պատասխանը եղավ՝ երկուշն ալ: Հայտնելով փարիզաբնակ դերասան մեկ ընկերոջս փափաքը զի՞նքը տեսնելու, Կոմիտասը դեմքին անախորժ ձև մը տալով ըստավ, «ոչ ոքի կուզեմ տեսնելո: Իսկ երբ ես ըսի, «Երբեկի բարեկամու, մարդկությունը մի տաեր, զիտես, որ ամբողջ հայ ժողովուրդը քեզ կսպասե, քու վերադարձիդ համար կատապավի...»: Նա այդ բոպեկին իր զիտակցությունը լիովին կորոնցուցած, կցկտուր բառերով ինձ մատնացուց ըրավ քովի սենյակը, ուր իբր թե անդունչ մը նկատելով իրեն վիճակված էր միայն այնտեղ երթալ.. ես բռնըովին փոխելով իմ խոսքը, ըսի. «Եկուր միասին Սկանա

կղղին երթանք կամ իշխածին...», իսկ ինը ուսերը թոթվելով քմծիծաղով մը ափեցուց.» Այ Փանոս ջան, քանի որ եկեր եռ, այստեղ հետև մնայ:

«Իսկ երբ ես ուղեցի հրաժեշտ տալ նա սրտնեղած, առանց ինձ պատասխանելու, անցավ քովի սենյակը: Այլ անգամներ ալ դարձյալ հոգեբուժարանին բժշկապետին թույլտվությամբ, հայ երաժիշտներ և երգիչներ տարինք, և բացի մեկ անգամեն, որ եղավ առաջինը և վերջինը, Կոմիտասը սթափելով սկսավ շնչալ «Մեր գրանը խնկի ծառ, գյուլում ջան» երգը»:

«Ամեն անգամ ալ վերալարձանք այդ մահագուժ մթնոլորտեն անմշխիթար և արյունոտած սրտով»:

Նկարիչ Փանոս թերեւմնեղյան հառաջով մը սկսավ պատմել Կոմիտասին իր տված այցելություններուն ամենազառնագինը, հայտնելով, որ մինչև իր կյանքին վերջը պիտի հիշեր, իբրև աղեկտուր մեկ պատկեր...»

Փարիզին վերջնականապես Հայաստան տեղափոխվելե առաջ այցելեր էր իր բանկապէն Կոմիտասին վերջին հրաժեշտ տալու...»

«... Այդ օրը, ինչպես հաճախ, զարձյալ ծառի մը տակ կանգնած էր տարաբախտ Կոմիտասը, ձեռքին նուրբ ոստ մը բռնոծ: Այդ օրը բուրըովին դժգույն և ալեներ էր իր շալ բիթեմայի կիսաբաց կուրծքեն երկցող ոսկորներն ալ ալելի սաստկացուցին հուղումն... Մեղմ ձայնով մը բարեկցի, սկսա մեր միասին եղած օրերեն ուրախալի պատկերներ վերհիշել Բներայի մեր տան ծերունի խոհարար Վանեցի հաջի-աղբոր ապսպառնքներ տվի, հանձնարարեցի ճաշի համար պատրաստել յուղալի վոռշը զոր Կոմիտասը շատ կը սիրելու ժամե մը ավելի մեր անցյալ կյանքի անց ու դարձի պատկերները ճարպիկ դերասանի նման իրեն ներկայացուցի, կըկին և կրկին ծիծաղելի քըքիջներով ձեռքերս պարզեցի և սպարեցի, մինչև իսկ Մուշո Սուլթան Ս. Կարապետի արախաղացին հարազատ բարբառովվ երգեցի, որը անցյալ օրերուն լիաթոք քըքիջ կտամառներ իրեն..., բայց իզուր: Հերթապահը հոգեառի մը պես մոտենալով հայտնեց, որ հիվանդին հանգիստի ժամն էր արգեն... Կոմիտասի տարտամ և անկենդան նայվածքին տակ, արյունլիքա սրտես պոռթկացող դառն արցունքներ թափելով, վերջին մնաս բարյալս հեկեկացի... ի զուր ինձմե հեռացող ձեռքը խնդրելով...: Հոգեպիս փշրված, հեռացա վկլ-ժուիֆեն:

Այդ տարվան սկսյալ Նկարիչ Փանոս Թերլեմեղյան Երևանեն ամեն անգամ թիֆլիս գալուն, իբրև հարազատ կայցելեր ինձ: 1930-ին, երբ Թիֆլիսի Հայարտան մեր նկարչական միությունը կազմակերպեց Թերլեմեղյանի անհատական ցուցահանդեսը, իրի՝ կունները, իմ տանը (Կանովսկի փողոց № 23), ուր հաճախակի մեր Հայարտան արվեստագետներն ալ հիավաքվեին, գեղարվեստական անմռուանալի յամեր կվայելեինք:

1936 թվականին, Թերլեմեղյանի հետ ընակեցանք Աբովյան փողոց № 62 տան մեջ:

1936-ին, երբ Երևան-Կուլտուրայի տան մեջ կատարվեցավ Կոմիտասի աճյուններուն փոխադրության սպահանդեսը, բացի մեր տան նկարիչներն և երաժիշտներն, շարք մը զրոյներ, մտան Թերլեմեղյանի բնակարանը, իբրև հանգույցյալ Կոմիտասի ամենամերձագործին, հայտնելու իրենց ցավակցությունը:

Վաղ առավատյան Կուլտուրայի տունը հասանք: Այստեղ գլուխվող արվեստագետները հերթով պատվու պահակ կապասեին դադարին շուրջը: Ի վերջո իմ ալ կարգս եկամ և ցավով դիտեցի այդ կենաւունակ և մեծ արվեստագետին անճանանձնի դիմադիմերը:

Կուլտուրայի տան զանինը լիցված էր շքեկ պսակներով: Կար, նվազախումբ և երևանցիները ժամերով անցան զագաղին առջևեն իբրև վեշին հարդանք անմահ վարպետին:

Այդտեղ էր Թերլեմեղյանը, սդակի և արտասվաթոր Փարիզին դագաղին հետ զրկված էր խիստ ճաշակավոր քնարածե ծաղկեպատկեր մը, որ Թերլեմեղյանի առաջարկով զետեղվեցավ Երևանի երաժշտական թանգարանին՝ Կոմիտասին հատկացված բաժնին մեջ:

Իրինամուտին Կոմիտասի դագաղը արվեստագետ ընկերներու ուսերուն վրա, փոխադրվեցավ հին գերեզմանատան պանթեոնը: Բազմահազար մարդիկ խոնված էին թափոքին անցան ճամբուն վրա, իբրև հարդանքի ցույց:

Հին գերեզմանատան պանթեոնին՝ մեջ, Մոցարթի ըլլուստեմի եղանակով, հողին հանձնեցինք անմահ երաժշտագետ Կոմիտասի մարմինը:

Կարծես երկինքն ալ այդ միջոցին միացավ հուղարկավոր ժողովրդի վշտին, անձին տարափով մը Կոմիտասի երգերին «Զի-

Նար ես, կռանալ մի՞ երգեց Հայկանուշ Դանիելյանը, փղձկեցնելով
ներկաները Ծերունազարդ Փանոս Թերլեմելյանը հեկեկալով ափ
մը նող նետեց զագաղին վրա և ըստավ. «Վերջապես հասար մու-
րազիդ, քու հայրենի սուրբ հողին մեջ հանգչելով: Հավիտենական
հանդիստ ոսկորներուդ, անմահ Կոմիտաս...»:

1937-ին, հիշողությանս ապավինելով նկարեցի Կոմիտասը
Շեցլի բուժարանին մեջ, վերջին անգամ իմ տեսած արտահայ-
տությամբ: Իրիկուն մը նկարը ցույց տվի Թերլեմելյանին, խընդ-
րելով, որ ըստ իր դիտողությունները... Թերլեմելյան երկարօրեն
զննեց, նմանությունը և տիրող մանիշակագույնը գտավ գովելի
իսկ դանկին անհամաշափ շրջագծի մասին ըրավ իր դիտողու-
թյունները, և ընդհանուր նկարիս նյուանսավորման համար իր
խորհուրդները տվավի: Առաջարկեց աշխատանքս ավելորդ տեղ
չծանրաբեռնել: Մեծ նկարչին քաջարերանքը սախաեց զիս իրեն
համարձակորեն առաջարկել որ անսլատճ առ ինքը կտավին հանձ-
նե անմահ Կոմիտաս վարդապետին դիմանկարը: Նկարիչը գող-
դողուն ձեռքերը ցույց տալով՝ հուզված շեշտով ըստավ. «առաջգա-
կանությունը կորսնցուցած այս մատներով միթե կարելի՞ է Կո-
միտասը նկարել»:

Ու հազար անգամ ափսոսաց, որ իր վերջին տարիներու նվի-
րական իշխան հավիտենապես պիտի մնար անիրազործելի...»

Երկար տարբեներ Լուսոտնի մեջ վայելեր ենք Կոմիտասյան հայ-
կական ժողովրդական երգերը, Գուենս-հոլի անվանի համերգային
դահլիճնեն սկսյալ մինչև Ռաֆֆի—Լսարան ակումբը, որոնց համար
Փարիզին կհրավիրվեին Կոմիտասի լավագույն աշակերտունին և
աշակերտ Մարգարիտ Պապայանը և Արմենակ Շահ-Մուրատյանը:
Իսկ մեր Պոլիս վերաբարձեն ետք, 1911—1915, մինչև իր ծանր հի-
վանդությունը, բազմաթիվ անգամներ բախտ եմ ունեցեր զայն
լսելու: 1911-ի ամառն սկսյալ ես չեմ հիշեր գեթ փոքր ժամա-
նակամիջոց մը (բացի իր երաժշտական գործերով Պոլսին բացա-
կայիլը) որ ես ամիսը քանի մը անգամներ չլսեի իր քաղցը ձայնը:

Կարելի՞ է նոույնպես մոռնալ Կոմիտասի շունչովը սնված ու
աճած «Գուսան» երգչախոսմբին այն փառավոր համերգները,
որոնք տեղի կունենային թե Բերայի և թե Պոլս հայաշատ մյուս
թաղերուն մեջ: Այդ համերգները լսելու համար մարդիկ կուգա-
յին Պոլս նույնիսկ ամենահեռավոր անկյուններեն:

Հաճախ հպարտությամբ կը հիշեր իր աշխատանքով հայ ժողովրդական երգերու հմտություն ձեռք բերած տաղանդավոր երգիչները. Սպիրիտոն Մելիքյան, Արմենակ Շահ-Մուրատյան, Մարգարիտ Պալայան, Մաննիկ Գերազիերյան, Վարդան Մարգիսյան, Սեմերջյան, Սրբանտաճյան, Եքսերջյան, Կանանյան, Ազատյան, Մեհրաբյան և գեղա տասնյակներ:

1916 թվականին սկսյալ ասոնցմե մեկ քանին թե Պոլսո և թե այլ վայրերու մջե շարունակեցին Կոմիտասի սկսած գործը. ստեղծեցին երգչախումբեր, կազմակերպեցին համերգներ, տարածեով հայ ժողովրդական երգերուն անդուզական գեղեցկությունները, թե հայ, թե օտար ժողովուրդներուն մեջ:

Այսօր համայն հայությունը փառքով և պարձանքով կհիշատակե աշխարհի առջև իր ուրույն երաժշտության ուահվիրաներեն հայ ժողովուրդի երգի կոթող Կոմիտասի անմահ անունը:

Սովետական Հայաստանի ծաղկող մայրաքաղաք Երևանը ուղիոյի միջոցավ ամբողջ աշխարհին կը հայորդե հայկական ինքնուրույն երաժշտությունը և Կոմիտասի անունը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ԻՐ ՄՈՐ ՄԱՂԹԱՆՔԸ*)

„Քեզի տեսնեմ, իմ հատորիկ,
Կյանքիու ուղին, սիրազեղ,
Հայու ու անհայու դու որոնե,
Քեզի լինեն իրազեկ:

Մի քափառե կյանքի պարապ
Անապատում դու ի զուր,
Քեզ պահապան սուրբ հավատո,
Հուսու, սիրո լույս ու հուր.

ԿՈՄԻՏԱՍ

*) Բնդօրինակված թ. Աղատյանի հրապարակումնու:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | էջ |
|---|----|
| 1. Երկու խռով | 5 |
| 2. Առաջին հանդիպում | 7 |
| 3. Կոմիտասի Պոլտա Բանկաթիի տունը | 12 |
| 4. Կոմիտասի փառքի օրերեն | 14 |
| 5. Կոմիտաս՝ Ռումելի-հեսարի Շեյխուլիմին մեջ | 17 |
| 6. Կոմիտասի հայրենի աբաղաղը | 20 |
| 7. Կոմիտասը Խորեն Էֆենտի Խրիմյանենց տան մեջ | 21 |
| 8. Կոմիտասը «Գառագեղի սողաշանի»-ին խանուքին մեջ | 29 |
| 9. Կոմիտաս Պարտիզակի մեջ | 30 |
| 10. Կոմիտասի «Անուշ» օպերային հատվածներ «Փըթի-Շանի» ձմեռային բատրանին մեջ | 36 |
| 11. Վերջին անգամ Կոմիտասի մատ | 37 |
| Հավելում | |
| 12. ԻՐ մոք մաղթամբը | 44 |

Պատ. Խմբագիր՝ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Տել. Խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՃ 01205 Պատվեր № 768 Տիրաժ 3000 Տպագր. Յ մամուլ.
հեղ. 2 մամ. Ստորագրված է տպագրության 28/II 47 թ.

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կեց պոլիցիր. և հրատ. վարչ.
№ 3 տպարան, Ալավերդյան № 65 Երևան, 1947

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0036996

Գիւլ 4 Ռ.

